

քարտուղար Մօնս. Պօրճիային նամակ մը կը զրկէ, չուով երթալու թոյլտուութիւն խնդրելով: Հետեւեալն է այս նամակը, որուն Սարգսի ձեռօք գրուած օրինակը կը պահուի Վիլոնոյի գիւանը:

Մեծաւ պատկառանօք եւ յարգանօք մատչիլ բղձածկտեմ առ բարձրաբերձ եւ երկնահուպ Սինայն բանաւոր, այսինքն՝ ի համբոյր Սրբազան գարշապարաց ծայրագոյն Քահանայապետին զինուորեցելոյ Սրբոյ Եկեղեցւոյ, եւ անյոյդողդ փոխանորդի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նաեւ ճշմարիտ յաջորդի Սրբազան առաքելոյն Պետրոսի, Տեառն Աղեմէսի ԺԳ.՝ ի՛ ունողի յերկրի զփականս երկնից:

Համանգամայն շուրջ զնովաւ եղելոց բազմաշեայ քերօփէից, այսինքն՝ գերազանց եւ Սրբոյ Ժողովոյն Արարինալաց, մեծաւ հպատակութեամբ համբոյր խոնարհական մատուցանեմ մաքուր քղանցից նոցին. ի ձեռն քոյոյ վսեմափառ գերազանցութեան:

Եւ հետեւապէս պարաւանդիմ՝ ծանուցանել քոյոյ վեհանձնութեան եւ գերիմաստութեան՝ որ ես հաւատարմագոյն խորհրդահաղորդ Սրբոյ Ժողովոյն:

Ձի ես յետնեալս եւ աւելածուս ի խումբս ուղղափառ եկեղեցականաց Հայոց, յամի Տեառն 1744 եկեալ ի մեծ քաղաքդ Հոօմ ի համբոյր ստից Բէնէզիկտոս ԺԳ. քահանայապետի, որ էր յայնժամ խորհրդական սրբոյ Ժողովոյն մօնսինեօր լէրքարին առ Տէր հանգուցեալն, որ առաւել օգնական եղեալ մեզ յամենայն կողմանէ, եւ ներկայացոյց զմեզ առաջի ծայրագոյն Քահանայապետին, որ եւ նոյնն թէ որքան եզական եւ յատկագոյն յատկօրինութիւնս եւ բարբերութիւնս շնորհեաց մեզ, այժմն ոչ է ժամանակ մի ըստ